Ազդարարության Trumpet's Sound փող

52-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՅՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2021

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը ..... Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Սաղմոս 16. ..... Դոն Սթորմըր

Անմար կյանք ..... Նեյլ Բուքման

Հիմա դու այստեղ կանգնի՛ր, ... Քաղված

Գառնուկն ու կնիքները (1) ..... QMBC պանորամա

Աճող եկեղեցի ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Որքանո՞վ կարող ենք սխալվել ..... Ռեքս Տիրլավ

Ինչո՞ւ հոչակել Խոսքը ..... Զեսլո Բասսարա

Ապակե շիշը ..... Քաղված

Ամենակարող Աստված ..... Քաղված

Ես եկել եմ դժոխքից. ..... Հովիվ՝ Գառնիկ Աբրեյան

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը

Մենք՝ որպես քրիստոնյաներ, ինչպե՞ս պետք է ապրենք 2021 թվականին:

«Եթե աշխարհից լինեիք, աշխարհն իրենը կսիրեր, բայց որովհետև դուք աշխարհից չեք, այլ Ես ձեզ աշխարհից դուրս ընտրեցի, դրա համար աշխարհն ատում է ձեզ» (Հովհ. 15:19):

Մեր թագավորությունը Երկնքում է:

«Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն, վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում» (Կող. 3:1):

Աշխարհը քաոսային վիճակում է: Պարզապես նայե՛ք քաղաքական իրավիճակին:

«Վերի՛ն բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա» (Կող. 3:2):

Նայե՛ք համաճարակին, և թե որքա՞ն մարդիկ պետք է համակերպվեն այս հիվանդությանը: Որքա՞ն կարող ենք դիմանալ: Հիշե՛ք Պողոս առաքյալին: Նոր Կտակարանի նրա որոշ նամակները գրված են բանտից, ուր ո՛չ ուտելիք, ո՛չ էլ ջուր կար. չկար լոգարան, մաքուր օդ, ընկերներ...: Բայց առաքյալը ցնծում էր: Նա երբեք չխոսեց իր դըժվարությունների մասին, այլ Քրիստոսով միշտ ուրախ էր:

«Ամեն ինչում գոհությո՛ւն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով» (Ա Թես. 5:18):

Այո՛, մենք շատ բան ունենք սովորելու: Երբեք մի՛ մոռացեք, որ կառավարությունը Աստծո կողմից է կարգված:

«Թող ամե՛ն մարդ բարձր իշխանություններին հնազանդ լինի: Որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանություններն Աստծուց են կարգված» (Հռոմ. 13:1):

Շատ հավատացյալներ ծուլանում են միասին հավաքվելու մեջ՝

պատճառաբանելով «Zoom»-ի հասանելիությունն ու առավելությունը:

«Եվ մեկտեղ հավաքվելը չթողնենք, ինչպես ոմանց սովորությունն է, այլ միմյանց հորդորենք. և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտենում է» (Եբր. 10:25):

Վերջին ժամանակներում ապրելով՝ մենք շատ լավ գիտենք, որ այս բաները պիտի տեղի ունենան:

«Որովհետև այն ժամանակ այնպիսի մեծ նեղություն պիտի լինի, որի նմանը աշխարհի սկզբից մինչև հիմա չի եղել և չի էլ լինի» (Մատթ. 24:21):

Երբեք մի՛ մոռացեք Տիրոջ խոստումները:

«Սովորեցրե՛ք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ Ես ձեզ պատվիրեցի: Ահա Ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»: Ամեն» (Մատթ. 28:20):

Հ. Գ.

Սաղմոս 16

16-րդ Սաղմոսը մեսիական սաղմոսների շարքում երրորդն է: Այն Դավթի Սաղմոսներից մեկն է, և չնայած որ Սաղմոսում գլխավոր հերոսը ինքն է, սակայն այն վերաբերում է Մեսիային ու Նրա հարությանը:

Դավիթը սկսում է աղոթքով՝ Աստծո պահպանող շնորհքը խնդրելով: Սա աղոթք է, որը պետք է յուրաքանչյուրիս շրթունքներին լինի: Շեշտը դրված է Տիրոջ պահպանող զորության վրա՝ միտք, որը հաճախ կրկնվում է Սաղմոսաց գրքում: Նույնը տեսնում ենք Սաղմոս 121-ում. «Նա, ով պահպանում է քեզ, չի նիրհելու»: Այս Սաղմոսում սաղմոսերգիչը խնդրում է Աստծուն, որ իրեն պահի, քանի որ իր հույսը Նրա վրա է դրել: Նա այսպես խնդրելու իրավունք ուներ, քանի որ իր վստահությունը Աստծո վրա էր դրել: Սա զարմանալի ճշմարտու-

թյուն է: Երբ մենք՝ ոչինչներս, մեր վստահությունը Աստծո վրա ենք դնում կամ Նրան ենք ապավինում, կարող ենք ակնկալել, որ Աստված հոգ կտանի մեր մասին:

Դավիթը նաև համոզված էր, որ Աստված իր Տերն է, և երբեք չէր հապաղում մարդկանց առջև վկայել Նրա մասին: Լավ է հիշել, որ առանց Տիրոջ՝ մենք ոչ մի բարիք չունենք: Նա է մեր միակ բարությունը:

Այս համարներում Դավիթը Աստծո մասին երեք տիտղոս կամ անուն է օգտագործում՝ Էլ, Յահվե և Ադոնայ: Էլ-ը, որ նշանակում է Աստված, հաճախ կցվում է ածականի, ինչպես օրինակ՝ արդար Աստված: Սրա նման կա ևս մեկ անուն՝ Էլ-Շադդայ, այսինքն՝ ամենակարող Աստված: Նա Յահվեն է՝ ուխտը պահող Աստվածը, Նա Ադոնայն է՝ գերիշխան Տերը:

Հետաքրքրական է, թե 3-րդ համարում ո՞վ է խոսողը: Արդյոք Դավիթը իր մասի՞ն է ասում, որ ուրախանում է Տիրոջ սուրբերով, թե՞ Տեր Հիսուսն է ասում, որ Իր հաճությունը Իր սրբերի մեջ է: Եթե Դավիթն է, ուրեմն ինքներս մեզ պետք է հարցնենք, թե արդյոք մեր ուրախությունը Տիրոջ ժողովրդի մե՞ջ է: Որտե՞ղ ենք գտնում մեր ուրախությունը: Կասկած չկա, որ սուրբերը կատարյալ են. Աստված Իր համար առանձնացվածներին կատարյալ է տեսնում: Եթե Աստված Իր հաճությունը սրբերի մեջ է գտնում, ուրեմն մենք նույնպես պետք է ուրախություն գտնենք նրանց մեջ:

Դավիթը մտածում է չաստվածներին երկրպագողների մասին: Այս Սաղմոսի նկատմամբ մակերեսային մոտեցում ունեցողները պնդում են, թե մենք այլ աստվածներով չենք անհանգստանում, ինչպես հեթանոսներն են անում: Բայց պետք է հարց տանք, թե արդյոք մեր ուշադրությունը այլ աստվածների վրա սևեռե՞լ ենք, թե՞ ոչ: Այսօր շատերը պաշտում են սպորտը կամ նյութը: Մենք մեր տներն ու աշխատանքի ասպարեզը աստվածների վերածելու փորձության առջև ենք: Իսրայելցիների մշտական խնդիրներից մեկն այն էր, որ նրանք ուզում էին նմանվել իրենց շրջապատի ժողովուրդներին: Նույնիսկ հավատացյալները ազատ չեն այս փորձությունից: Հեշտ չէ ամբոխից առանձնանալն ու տարբերվելը:

Ովքեր խոնարհվում են այլ աստվածների առջև, շուտով հանդի-

պելու են տարբեր ցավերի: Այսօրվա երկրպագողները բավարարվածություն են փնտրում, սակայն աշխարհի աստվածները բավարարվածություն չեն պարգևում: Նրանք իրենց երկրպագողներին դատարկության զգացողություն են տալիս: Հարստության ձգտողները երբեք չեն բավարարվի իրենց ունեցածով: Այս աստվածները շարունակում են իրենց երկրպագողներից ավելի մեծ հավատարմություն պահանջել: Դավիթը վճռական էր այլ աստվածների զոհասեղաններին պարգևներ չբերելու հարցում: Նա հավիտյանս իր Տեր Աստծուն էր երկրրպագելու:

Դավիթը կարող էր այդպես անել Աստծո հանդեպ ունեցած իր բացարձակ վստահության շնորհիվ: Նա գիտեր, որ Տերը իր բաժինը պահելու էր, և Նրա տվածը ապահով էր մնալու: Նա կարող էր հանգստանալ Տիրոջ տված բարի ժառանգությունն ունենալու հավաստիացումով. «Ինձ վիճակվել են ցանկալի տեղեր»: Գուցե Դավիթը մտածում էր այն մարդկանց մասին, ովքեր դժգոհ էին սահմանները հաստատելու ժամանակ իրենց ստացած հողակտորներից: Նրանք, որոնք Տիրոջն են նայում, գիտեն, որ Նա հոգում է իրենց մասին և ոչ մի բանի պակասություն չեն ունենալու:

Պողոս առաքյալը գիտեր՝ ինչպես վարվել հարստության և աղքատության հետ: Փիլիպ. 4:11-13-ում նա ասում է. «Նյութական կարիքների մասին չեմ խոսում, քանի որ սովորել եմ գոհ լինել իմ գտնված վիճակից: Գիտեմ չքավորություն կրելը, գիտեմ շատ ունենալն էլ: Ամեն վիճակի մեջ ամեն ինչում սովորել եմ թե՛ կուշտ լինելուն, թե՛ քաղցածությանը, թե՛ շատ ունենալուն և թե՛ զրկանքներ կրելուն: Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ»: Լավ է բավարարվել սեփական վիճակով: Լավ է գիտակցել, որ եթե Տերը ուղղորդի մեր ճանապարհը, մենք միշտ լավ ժառանգություն կունենանք:

Դավիթն ասում է, թե որն է Տիրոջ օրհնելու պատճառը: Տերը ամեն ժամանակ նրան առաջնորդում էր՝ տալով անհրաժեշտ խրատը: Նա գիշերները Տիրոջից ուղղություն էր ստանում: Սաղմոս 119:55-ում նա գրեց. «Գիշերով Քո անունը հիշեցի, ո՛վ Տեր, ու Քո օրենքը պահեցի»: Իսկ Սաղ. 63:6-ում գրեց՝ ասելով. «Երբ Քեզ եմ հիշում անկող-

նուս վրա, ու Քո մասին մտորում...»: Ուրիշներն իրենց անկողինների վրա չարագործություններ էին մտածում, բայց Դավթի ուրախությունը Տիրոջ մեջ էր: Զարմանալի չէ, որ Դավիթը շարունակում է՝ ասելով, որ իր սիրտը ուրախ է:

8-րդ համարը անցումային է: Դավիթը Տիրոջ հետ իր ունեցած հարաբերության մասին մտածելուց հետո անցնում է Մեսիայի մասին մտածելուն: Լավ էր, որ Դավիթը Տիրոջը ամեն ժամանակ իր առջև էր դրել, և որ Տերը իր աջ կողմն էր՝ առաջնորդելով իրեն: Այնուամենայնիվ, այս խոսքերը ճշմարիտ են Տեր Հիսուսի համար: Նա Տիրոջը պատվավոր տեղն էր տվել և հետևաբար երբեք չէր սասանելու:

Դավիթը Աստծո մասին է մտածում, որ իր աջ կողմում է և պատրաստ է իրեն տալու անհրաժեշտ օգնությունը: Սա ճշմարիտ է նաև Մեսիայի համար: Սակայն երբ կարդում ենք Սաղմոս 110-ը, տեսնում ենք, որ Աստված Մեսիային ասում է. «Նստի՛ր Իմ աջ կողմում, մինչև քո թշնամիներին ոտքերիդ պատվանդան դարձնեմ»: Մեսիան իշխանություն ունեցող դիրք ունի:

Չնայած խոսողը Դավիթն է, սակայն Մեսիայի մասին մտքերը ավելի ակնհայտ են դառնում: Տիրոջ հանդեպ իր վստահության պատճառով Դավթի սիրտը ուրախ էր: Տերը պահում էր նրան ապահովության մեջ: Բայց նույնիսկ այստեղ կա այն իմաստը, որ Դավիթը այս կյանքի սահմաններից այն կողմ էր նայում:

Դավիթը շատ հստակ հավատում էր, որ Շեոլ-ից այն կողմ կյանք կա: Շեոլը մահացած մարդկանց հոգիների վայրն է: Հին Կտակարանի սուրբերին ամբողջովին հայտնված չէին հանդերձյալ կյանքի մանրամասները: Նրանք միայն գիտեին, որ մահից հետո ինչ-որ վայր կա: Ղուկ. 16-րդ գլխի մեծահարուստի և Ղազարոսի պատմությունից սովորում ենք, որ Շեոլը բաղկացած է երկու մասից, և որ անհնարին է տանջանքի վայրից անցնել հանգստի վայր: Այնուամենայնիվ, Դավիթը գիտեր, որ իր բաժինը անորոշության վայրում չէ, այլ որ ինքը ճիշտ ժամանակին մտնելու է Տիրոջ ներկայության մեջ: Այնտեղ նա վայելելու է Աստծո հաճությունները:

10-րդ համարում շատ ավելի հեշտ է տեսնել Մեսիային: Նա ճաշակեց մահը մեզ համար, բայց գիտեր, որ Իր մահը շատ կարճ էր

տևելու: Երբ այս Սաղմոսը դիտարկենք որպես մեսիական սաղմոս, կտեսնենք, որ Տերը ոչ միայն չմնաց մահացածների աշխարհում, այլև Նրա մարմինը ապականություն չտեսավ: Նա երրորդ օրը գերեզմանից հարություն առավ և հաջորդ 40 օրերի ընթացքում հայտնվեց հարուցյալ մարմնով:

Տեր Հիսուսի ժամանակակիցները չկարողացան հասկանալ սա: Հարության առավոտյան Մարիամ Մագդաղենացու թախանձագին աղաչանքի հիման վրա Պետրոսն ու Հովհաննեսը գնացին Տեր Հիսուսի գերեզման: Նրանք տեսան, որ Տերը այնտեղ չէ, իսկ Նրա գերեզմանի կտորները կոկիկ դրված են այնտեղ: Հովհաննեսը հասկացավ, որ սա միայն մեկ բացատրություն ունի. Տերը մեռելներից հարություն է առել: Իր Ավետարանում նա կարծես թե խոստովանական կերպով գրում է՝ ասելով. «Որովհետև նրանք դեռ Գիրքը չգիտեին, թե Նա պետք է մեռելներից հարություն առնի»:

Այժմ Տեր Հիսուսը Հայր Աստծո աջ կողմում է: Նրա համար հավիտենական ուրախություն կա, սակայն Նրա ուրախությունը կատարյալ կլինի, երբ Իր բոլոր փրկագնածները Իր մոտ լինեն ու վայելեն Իր ներկայությունը: Երկրի վրա մենք մեր աչքերը կփակենք այն հաստատուն համոզմունքով, որ պիտի մտնենք Հոր ներկայության մեջ ու վայելենք հավիտենական ուրախությունը:

Ի՞նչ կարող ենք սովորել անձնական կյանքի համար: Մի քանի հարցեր կան, որոնց մասին պետք է մտածենք.

- Արդյոք կատարյալ վստահություն ունե՞նք, որ Տերը կարող է պահել մեզ մինչև մեր կյանքի վերջին շունչը:
- Արդյոք ամբողջ սրտով Տիրոջը փնտրո՞ւմ ենք, թե՞ հետևում ենք աշխարհի աստվածներին:
- Արդյոք Աստծուն շնորհակալություն հայտնո՞ւմ ենք Նրա բազմաթիվ օրհնությունների համար:
- Արդյոք ուրա՞խ ենք մեզ սպասվող հեռանկարով:

Դոն Սթորմը

Անմար կյանք

«Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ և բեռնավորվածներ, և Ես ձեզ հանգստություն կտամ: Իմ լուծը ձեր վրա վերցրե՛ք և Ինձնից սովորեցե՛ք, որ Ես հեզ եմ ու սրտով խոնարհ. և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք, որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև» (Մատթ. 11:28-30):

Ավստրալիայի վարչապետներից մեկը, հավանաբար հիասթափված լինելով իր ուսերին դրված սպասելիքներից, հետևյալ խոսքն ասաց. «Կյանքը երբեք հեշտ չի եղել»: Մարդիկ հարձակվում էին նրա վրա ու ծաղրում էին, նրանից հեշտ կյանք էին պահանջում, կարծես թե դա իրենց հիմնարար իրավունքը լիներ:

Իսկապես, շատ երկար տարիներ մարդկությունը ձգտել է տարբեր ճանապարհներով թեթևացնել կյանքի բեռը: Բայց եթե իսկապես ուզում ենք հասնել անվերջ դյուրինության վաղանցիկ նպատակին, ապա արդյոք պատրա՞ստ ենք հաղթահարելու այն ամենը, ինչ խանգարում է կամ ծանրաբեռնում է մարդկային սիրտը:

Մենք հեշտություն ենք փնտրում, սակայն տարօրինակն այն է, որ չնայած հեշտությամբ կարող ենք պատկերացնել ամեն տեսակի վախ ու տառապանք, սակայն չենք կարողանում պատկերացնել որևէ իրական հանգամանք, որը կարող է անվերջանալի երջանկություն ու գոհունակություն պարգևել մեզ: Մեր բոլոր պատկերացումները ուշ թե շուտ մեզ համար ձանձրացուցիչ ու հոգնեցուցիչ են դառնում: Սակայն ինչո՞ւ է այդպես:

Թերևս պատճառն այն է, որ մենք հակված ենք կենտրոնանալու մեզ ծանոթ մարդկանց, մեր կատարած արարքների և մեր գնացած տեղերի վրա մեր կյանքի իրական բնույթի վրա կենտրոնանալու փոխարեն: Մեր կյանքը, սկսած բեղմնավորման պահից, ընթանում է դեպի մահ: Ինչպես ավազե ժամացույցի ավազի հատիկը, ժամանակը միշտ սպառվում է, և մեր մահը ավելի է մոտենում: Սա է խնդիրը: Բոլորս գիտենք, որ մի օր մահանալու ենք, բայց փորձում ենք ապրել այնպես, կարծես դա չի պատահելու մեզ հետ: Մեզ պարուրող վրշ-

տերից և պայքարներից վեր բարձրանալու համար մենք պետք է հասկանանք ու գտնենք մահվան ցնցող փաստի պատասխանը: Միայն այդ ժամանակ կարող ենք ունենալ հույսի իրական և տևական ներքին խաղաղությունը: Արդյոք կա՞ որևէ միջոց: Արդյոք կա՞ պատասխան:

Ինչ-որ մեկը այս հարցն է տվել. «Եթե Աստված մարդ դառնար, ապա ինչպիսի՞ն կլիներ Նա»: Ի պատասխան՝ շատ մտքեր կարող ենք առաջարկել, բայց դրանցից մասնավորապես մեկը հատուկ կերպով պետք է ընդգծել: Եթե Աստված մարդ դառնար, ապա հաստատ կհաղթեր մահվանը. մահը չէր կարողանա հաղթել Նրան:

Աստված մարդ դարձավ. Նա մարդկային բնույթով քայլեց երկրիս վրա, փորձառեց մեր տառապանքներն ու վշտերը, և չնայած արտաքինով սովորական մարդ էր, սակայն ապացուցեց, որ Ինքը Աստծո Որդին է ու աշխարհի Փրկիչը: Ինչպե՞ս: Նա հաղթեց մահվանը: Նա անկարող չէր մահվան դիմաց. մահը չկարողացավ և ոչ էլ կարող էր հաղթել Նրան: Նա՝ Հիսուս Նազովրեցին, ում գալիլիացի մարգարե անվանեցին, Աստծո պատասխանն է հավիտենական խաղաղության համար:

Հիսուսը բժշկեց հիվանդներին ու անդամալույծներին, հարուցանեց մեռելներին, սակայն Ինքը մահացավ խաչի վրա ոչ թե Իր համար, այլ մեր մեղքերի համար Աստծո արդար բարկության պատիժը կրելով: Նա հաղթեց սարսափելի մահվանը ու հարություն առավ, որպեսզի Իր չմարող և մահվանը հաղթող կյանքը պարգևի բոլոր նրանց, որոնք Իրեն են դառնալու ու իրենց հույսը Իր վրա են դնելու:

Նրանք, որոնք փնտրեցին ու գտան Հիսուսի սերն ու ներումը, Աստծո շնորհքով կբաժնեկցեն Նրա փառավոր ու անմահ կյանքը: Չնայած Նրանք հանդիպում են վշտի, տառապանքի, հիվանդության ու տխրության, սակայն այդ ամենի մեջ սովորում են խորը ուրախությամբ և իրական խաղաղությամբ կյանք ապրել, քանի որ ունեն մի կյանք, որը չի կարող մահանալ:

Իհարկե, բոլորն ուզում են այդպիսի կյանք ունենալ, բայց քչերն են պատրաստ վճարելու ապաշխարության և Տեր Հիսուս Քրիստոսի փառավոր ու սիրալիր տիրությանը ենթարկվելու «գինը»: Շատերը

կարծում են, թե գինը շատ բարձր է: Սակայն արդյոք այդպե՞ս է: Արդյոք մե՞ծ բան է մեղքի կեղտոտ լաթերը մեկ կողմ նետելն ու արքայական ընտանիքին վայել հագուստ հագնելու համար այդ գինը վճարելը: Արդյոք մե՞ծ բան է ձեր ճախողած ու դառը իմաստությունից հրաժարվելն ու երկնային սուրբ ու խաղաղ իմաստություն ունենալու համար այդ գինը վճարելը: Արդյոք մե՞ծ բան է մահվան ստվերի երկիրը լքելն ու չմարող կյանքի պայծառ բարձունքներին հասնելու համար այդ գինը վճարելը:

Ո՛չ, գինը բարձր չէ, ավելի շուտ, մեր բնությունը ծայրահեղ ըմբոստ է, և մեր սիրտը՝ չափազանց կարծր: Բայց պարտադիր չէ, որ այդպես մնա: Ուշադրությո՛ւն դարձրեք Տեր Հիսուսի կանչին, անձամբ փնտրե՛ք Նրան, և այդ ժամանակ Նրա միջոցով հավիտենական և անմար կյանք կգտնեք:

Նեյլ Բուքման

«Հիմա դու այստեղ կանգնի՛ր, որպեսզի Աստծո խոսքը քեզ հայտնեմ» (Ա Թագ. 9:27)

Ունայնությունը և շտապողականությունը ժամանակակից կյանքին բնորոշ հատկանիշներ են: Այսօր մեզ շրջափակում է տեղեկատվության հսկայական հոսքը: Ոչ մի սերունդ չի տեսել և չի լսել այնքան շատ, որքան մենք: Տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունները սրընթաց արագությամբ փոխարինում են մեկը մյուսին:

Հաճախ մենք ժամանակ չունենք՝ մարսելու այն ամենը, ինչը իմանում ենք օրվա ընթացքում: Տպավորությունները չափազանց շատ են լինում: Շատ բաներ մոռանում ենք, որոշներն ընկալում ենթագիտակցորեն, քանի որ կուշտ ենք տեղեկություններով: Իսկ ո՞վ է ժամանակ հատկացնում Աստվածաշնչի ընթերցանությանը:

Արդյոք կարո՞ղ է Աստվածաշունչն ինչ-որ բան ասել մեզ: Արդյոք արդիակա՞ն է դրանում գրվածը: Ահա այն հարցերը, որոնք տալիս է ժամանակակից մարդը, որը վարժվել է այն մտքի հետ, թե իր համար կարևոր են միայն վերջին նորությունները:

Աստվածաշունչն իսկապես արդիական է, չնայած չի տալիս սենսացիոն իրադարձությունների անվերջանալի հոսք. Աստվածաշունչն Աստծո հավիտենական Խոսքն է, ինչն էլ արդիական է դարձնում այն: Մարդկանց ուղղված Աստծո նամակն ունի մեծ նշանակություն՝ անկախ ժամանակներից և բարքերից: Նա, ով պատրաստ է կարդալու Աստվածաշունչն առանց նախապաշարումների, կհայտնաբերի, որ այնտեղ կա կյանքի համար կարևոր տեղեկատվություն, որը կարթնացնի սրտերը և կլինի սենսացիոն, բացարձակապես այլ նշանակությամբ:

Սակայն Աստծուն լսելու համար մենք պետք է մոռանանք ամեն ինչ և սուզվենք լռության մեջ: Աստված մեզ չի դիմում թռուցիկ կերպով կամ շտապողականությամբ: Նա, ով սկսում է կարդալ Աստվածաշունչը և փնտրել ճշմարտությունը, շուտով կհետաքրքրվի դրա լուրով, որն ուղղված է յուրաքանչյուր մարդու:

Քաղված

❊ ❊ ❊

«Իմաստությունը չի՞ աղաղակում, ու հասկացողությունը ձայն տալիս: Նա կանգնում է բարձունքների գագաթին, ճանապարհների եզրերում, տների միջև, արահետների հանդիպման կետերում: Նա կանչում է դարպասների մոտ՝ քաղաքի մուտքի մոտ, դռների բացվածքում. «Ձե՛զ եմ կանչում, ո՛վ մարդիկ, և իմ ձայնը մարդկանց որդիներին է ուղղված: Ո՛վ պարզամիտներ, իմաստությո՛ւն սովորեցեք, ո՛վ հիմարներ, հասկացող սի՛րտ ունեցեք: Լսեցե՛ք, քանի որ ազնիվ բաներ եմ ասելու ձեզ ու շուրթերս չիտակ բաներ խոսելու համար եմ բացելու»»:

Առակաց 8:1-6

Գառնուկն ու կնիքները (1)

1. Ներածություն

Այժմ գալիս ենք Հայտնություն գրքի երրորդ բաժանումին. «Եվ սրանից հետո» (Հայտ. 4:1): Սա նշանակում է, որ եկեղեցական ժամանակաշրջանն ավարտվում է Եկեղեցու հափշտակությամբ, և սկսվում է Մեծ նեղության ժամանակաշրջանը: Սակայն նախևառաջ Հովհաննեսը Սուրբ Հոգով տեղափոխվում է Երկինք, որպեսզի Աստծուն տեսնի՝ Իր գահին նստած, շրջապատված հրեշտակներով, որոնք փառք, պատիվ ու զորություն են մատուցում գահի վրա նստողին: Նույնն անում են նաև 24 երեցները:

Այնուհետև կարդում ենք յոթ կնիքով կնքված գրքի մասին, որը միայն Գառնուկը կարող է բացել: Յոթ կնիքներից վեցը բացելիս երկրի վրա այնպիսի դատաստաններ են տեղի ունենում, ինչպիսիք մարդկությունը երբևէ չի փորձառել: Բայց ավելի վատը դեռ առջևում է՝ յոթ փողերն ու յոթ թասերի դատաստանները:

Նախքան Գառնուկի՝ յոթերորդ կնիքը բացելը մի ժամանակամիջոց է լինելու, երբ Ավետարանը քարոզվելու է և ընդունվելու է Մեծ նեղության ժամանակաշրջանում: Կարդում ենք 144,000 Աստծո հրեա ծառաների մասին, որոնք, իրենց ճակատին կենդանի Աստծո կնիքը կրելով, պաշտպանված են դատաստաններից: Նրանք Թագավորության Ավետարանը քարոզում են ամբողջ աշխարհում, և նրանց քարոզչության շնորհիվ հազարավոր մարդիկ փրկվում են, բայց այդ մարդկանց մեծամասնությունը նահատակվում է իրենց հավատի համար: Հովհաննեսն այնուհետև տեսնում է հավատարիմ մնացող մարդկանց երանելի վիճակը, ովքեր դուրս են գալիս Մեծ նեղության ժամանակաշրջանից ու կազմում են Քրիստոսի Հազարամյա թագավորության մի մասը (Հայտ. 7:14-17):

Ամենավերջում տեսնելու ենք Գառնուկին յոթերորդ կնիքը բացելիս, որը ներկայացնում է յոթերորդ փողի դատաստանը (Հայտ. 8:1-2):

2. Երկինքն ու Աստծո գահը (4:1-11)

Հովհաննեսը Սուրբ Հոգով տեղափոխվում է Երկինք, որպեսզի երկնային տեսանկյունից տեսնի այն, ինչ տեղի է ունենալու երկնքում ու երկրի վրա Եկեղեցու հափշտակությունից հետո: Ուշադրությո՛ւն դարձրեք, որ «եկեղեցի» բառը այլևս չի հիշատակվում Հայտնության գրքում: «Եկեղեցիներ» բառը նշվում է միայն մեկ անգամ, երբ հասնում ենք 22:16 համարին: Սա ցույց է տալիս, որ Եկեղեցին այլևս երկրի վրա չէ:

Հայտնության գրքում Աստծո գահը շատ մեծ տեղ է զբաղեցնում. այն հիշատակվում է ավելի քան 30 անգամ: Գահը խոսում է զորության և հեղինակության մասին, բայց Աստծո գահը խոսում է վերջնական ու բացարձակ զորության ու հեղինակության մասին: Չկա մի զորություն, որը կարող է հաղթել Աստծո զորությանը: Սատանան փորձեց զավթել Աստծո գահը, և նա նորից փորձելու է անել դա, բայց նրա վերջնական ճակատագիրը լինելու է հավիտենական կրակի լիճը (Եսայի 14:13-15, Հայտ. 20:10, Հայտ. 2:13, 13:2, 16:10):

Հովհաննեսն այնուհետև նկարագրում է այն, ինչ տեսնելու առանձնաշնորհումն ունեցավ. «Ահա մի գահ էր դրված երկնքում, ու գահի վրա Մեկը նստած: Եվ Նստողը հասպիս ու սարդիոն (թանկարժեք գունավոր քարեր) քարերի տեսքն ուներ: Եվ գահի շուրջբոլորը ծիածան էր՝ զմրուխտի (մեկ այլ թանկարժեք գունավոր քար) տեսքով: Ու գահի շուրջը քսանչորս աթոռներ կային»: Հստակ չէ, թե ովքե՞ր են այդ երեցները, բայց հավանաբար Հին Կտակարանի հավատացյալների և Նոր Կտակարանի եկեղեցու հրեշտակային ներկայացուցիչներ են: Նշենք, որ մի քանի նմանություն կա Սուրբ քաղաքի՝ Երուսաղեմի պատի հիմքերի ու դարպասների նկարագրության հետ. Հայտ. 21:12-14: Երեցները հագել էին ճերմակ հանդերձներ ու գլուխներին ունեին ոսկե պսակներ:

Գահի տեսարանը նկարագրվում է որպես կարգ ու կանոնի, խաղաղության ու հանգստության տեսարան: Ավելի ուշ տեսնելու ենք, որ այն նաև երկրպագության տեսարան է: Սակայն արտաքնապես այն բարկության ու դատաստանի տեսարան է՝ պատրաստ մեղավոր աշխարհի վրա թափվելու. «Եվ գահից փայլակներ ու որոտներ

և ձայներ էին լսվում» (Հայտ. 4:5):

Հովհաննեսը գահի առջև տեսավ յոթ վառվող ջահ, որոնք ներկայացնում են Աստծո յոթ հոգիները: Նա նաև գահի առջև տեսավ բյուրեղի նման ապակե մի ծով, որը, թերևս, խորհրդանշում է Աստծո սրբությունն ու մաքրությունը:

Կարդում ենք ետևից ու առջևից աչքերով լի ու վեց թև ունեցող չորս կենդանիների մասին: Առաջին կենդանին նման էր առյուծի, երկրորդը՝ եզի, իսկ երրորդը մարդու նման դեմք ուներ, ու չորրորդ կենդանին թռչող արծվի էր նման: Նրանք կարծես թե հատուկ կարգի հրեշտակներ են, որոնց գործը նվիրված կերպով Աստծուն շարունակական երկրպագություն մատուցելն է (Հայտ. 4:8): Նրանք գուցե նաև պահպանում են Աստծո գահը, նրանք տեսնում են բոլոր ուղղություններով, իսկ նրանց թևերը հնարավորություն են տալիս արագորեն կատարելու Աստծո կամքը: Նրանց յուրահատուկ առանձնահատկությունները գուցե մատնանշում են Աստծո մեծությունը (առյուծը), զորությունը (եզ), իմաստությունը (մարդը) և աչալրջությունը (արծիվը): Նրանք գուցե նաև ներկայացնում են Տեր Հիսուսի տարբեր հայեցակարգերը, որոնք արձանագրված են չորս Ավետարաններում: Ինչպես նշվեց նախկինում, Մատթեոսը Տեր Հիսուսին ներկայացնում է որպես Թագավորի (առյուծ), Մարկոսը՝ որպես ծառայի (եզը), Ղուկասը՝ որպես Մարդու Որդու (մարդ), իսկ Հովհաննեսը՝ որպես Աստծո Որդու (արծիվ):

Երբ կենդանիներն Աստծուն փառք են տալիս, 24 երեցները, գահի առջև ծունկի գալով ու իրենց պսակները գահի առաջ նետելով, ասում են. «Դու արժանի ես, Տե՛ր, փառք ու պատիվ և զորություն ստանալու, քանի որ Դու ստեղծեցիր ամեն ինչ, ու Քո հաճույքի համար եղան ու ստեղծվեցին» (Հայտ. 4:11): Այստեղ Աստծուն երկրպագում են որպես Արարչի: Հաջորդ գլխում Գառանը երկրպագում են որպես Փրկարարի:

3. Յոթ կնիքով կնքված Գիրքը (5:1-14)

Հովհաննեսը գահի վրա Նստողի աջ ձեռքում տեսավ երկու կողմերում գրված ու յոթ կնիքով կնքված մի Գիրք: Զորավոր մի հրեշտակ

բարձր ձայնով գոչում էր՝ ասելով. (տե՛ս նաև Հայտ. 10:1, 18:21) ««Ո՞վ է արժանի այս գիրքը բացելու և դրա կնիքները քանդելու»: Եվ ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրա ու ո՛չ երկրի տակ չգտնվեց մեկը, որ կարող լիներ գիրքը բացելու և կամ նրան նայելու: Եվ ես սաստիկ լալիս էի, որ չգտնվեց արժանի մեկը, որ բացեր ու կարդար գիրքը կամ նայեր նրան: Եվ երեցներից մեկն ինձ ասաց. «Մի՛ լար, ահա Հուդայի ցեղի Առյուծը՝ Դավթի Արմատը, հաղթեց, որ բացի գիրքը ու քանդի նրա յոթ կնիքները»»: Այնուհետև Հովհաննեսը տեսնում է մի Գառան, որը կարծես մորթված լիներ. նա յոթ եղջյուր ու յոթ աչք ուներ:

Ով է Նա, որ միևնույն ժամանակ և՛ Առյուծն է, և՛ Դավթի արմատը, և՛ Գառնուկը: Նա Գողգոթայի Գառնուկն է, ով «մորթվելու տարվող գառնուկի պես» (Ես. 53:7) զոհվեց մեզ համար: Նա նաև Քրիստոսն է, որը Դավիթ թագավորի սերնդից եկավ: Քրիստոսի միջոցով Դավթին տրված աստվածային բոլոր խոստումները կատարվելու են: Նա նաև Հուդայի ցեղի Առյուծն է, ինչը ցույց է տալիս Գիրքը և նրա յոթ կնիքները բացելու Իր աստվածային զորությունը, որի արդյունքում երկրի վրա սարսափելի դատաստաններ են լինելու: Հովհաննեսն արդեն իր Ավետարանում գրել էր այն խոսքերը, որ Հիսուսն ասաց. «Հայրը... ամեն դատաստան Որդուն տվեց... Եվ Նրան նույնպես դատաստան անելու իշխանություն տվեց, որովհետև Նա Մարդու Որդի է» (Հովհ. 5:22, 27): Քանի որ Հովհաննեսին տրվեց ապագա իրադարձությունների այս տեսիլքը, ուրեմն Տեր Հիսուսի՝ որպես Մարդու Որդու՝ աշխարհը դատելու ժամանակը եկել էր (Գործք 17:31):

Այսպիսով, Գառնուկը եկավ ու գահին Նստողի աջ ձեռքից վերցրեց Գիրքը: Այնուհետև չորս կենդանիներն ու 24 երեցները ընկան նրա առաջ ու երկրպագության նոր երգ երգեցին՝ ասելով. «Դու արժանի ես այդ գիրքը վերցնելու և դրա կնիքները բացելու, որովհետև մորթվեցիր ու Քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար՝ ամեն ցեղից ու լեզվից, ժողովրդից ու ազգից...» (Հայտ. 5:9-10): Այնուհետև անթիվանհամար հրեշտակներ շրջապատեցին գահը, կենդանիներին ու երեցներին և բարձր ձայնով ասացին. «Գառնուկը, որ մորթված էր, արժանի է ստանալու զորություն, հարստություն, իմաստություն, կարողություն, պատիվ, փառք ու օրհնություն (Հայտ. 5:12):

Աճող եկեղեցի

(Գործք 4:31-33)

«Ի՞նչ է պատահել եկեղեցիներին. ինչո՞ւ են փակվում»,- վերջերս հարցրին ինձ: Թվում է, թե Աստված մի կողմ է քաշվել և մերժել է եկեղեցին: Հնարավոր է, որ Աստված հեռացած լինի մի քանի եկեղեցիներից իրենց մեղքի, աշխարհիկության, ապականվածության և Քրիստոսին նման չլինելու պատճառով:

Ինչպիսի՞ն էր վաղ շրջանի եկեղեցին: Այն աճող եկեղեցի էր. մեկ դարում 120 հոգու փոխարեն արդեն ուներ 10 միլիոն անդամ: Այդ եկեղեցին չուներ այն հնարավորություններն ու միջոցները, որոնք այսօր մենք անհրաժեշտ ենք համարում՝ հրատարակչություն, լրատվություն, հնչյունային համակարգեր, արհեստավարժ հոգևորականություն և առաջնորդներ, նույնիսկ եկեղեցու շենքեր չունեին: Բայց նրանք գերազանցում էին մեր եկեղեցիներին. այսօր թերևս կշտամբեն մեզ: Ունենալով տեխնոլոգիական այսքան առաջընթաց, կրթություն և կազմակերպչական հմտություններ՝ մենք դարձյալ հաջողության չենք հասնում: Ինչո՞ւ: Ինչե՞ր ուներ այդ եկեղեցին, որ մենք չունենք:

ԱՅԴ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՂՈԹՈՂ ԷՐ

Եկեղեցին ծնունդ էր առել աղոթաժողովում: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, միահամուռ կերպով աղոթում էին (Գործք 1:14): Նրանք աղոթում էին և Սուրբ Հոգով լցվում (Գործք 4:31): Երբ Պետրոսը բանտում էր, նրանք աղոթեցին (Գործք 12) և այնպիսի հավատով էին աղոթում, որը նրանց համարձակ էր դարձնում: Նրանք այնքան ջերմեռանդորեն էին աղոթում, որ շենքը շարժվում էր: Աղոթքը կենսական է եկեղեցու առաջընթացի համար: Չաղոթող եկեղեցին կարծես խաղ է խաղում: Առանց աղոթքի՝ եկեղեցին անզոր է:

ԱՅԴ ԵԿԵՂԵՑԻՆ ՍԵՐ ՈՒՆԵՐ

Այդ սերը նրանց մղում էր միմյանց հետ կիսել իրենց ունեցածը, կարիքավորներին օգնել, մի կողմ դնել իրենց տարբերությունները:

Այսօր փոքր ու չնչին տարբերությունների պատճառով եկեղեցիները պառակտվում ու «հաշմանդամ» են դառնում: Սերը նրանց միավորում էր: Այդ տեսակ սերը արթնություն է բերում: Նրանք «վերիններ-ը» սիրում էին առավել, քան որևէ երկրային ունեցվածք:

ԱՅԴ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒՄ ԷՐ

Հիսուսը խոստացել էր այդ զորությունը տալ բոլոր այն հավատացյալներին, ովքեր կընդունեին Սուրբ Հոգին ու կդառնային նրա վկաները (Գործք 1:8): Նրանց էր ուղղվել Մեծ Հանձնարարությունը. «Գնացե՛ք և բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք» (Մատթ. 28:19):

Դեյվիդ Դոսոնն ասել է. «Նստարաններ զբաղեցնող, բայց լռող քրիստոնյաները քայքայում և անեծք են բերում քրիստոնեությանը»:

Երբ առաքյալներին ձերբակալեցին ու բանտ նետեցին, Տիրոջ հրեշտակը կեսգիշերին եկավ, դռները բացեց ու նրանց դուրս հանեց: Նպատակը ոչ թե այն էր, որ առաքյալները տուն գնային ու թաքնվեին կամ եկեղեցու մյուս անդամներին նախազգուշացնեին, այլ նրանք պետք է գնային տաճարներ ու մարդկանց պատմեին նոր կյանքի պատգամը (Գործք 5:20): Նրանք հենց հաջորդ օրը՝ առավոտյան, մտան տաճար և սկսեցին ուսուցանել:

Իմ կարծիքով, շատերը սխալ են հասկացել կամ մոռացել են եկեղեցու դերն ու նպատակը: Կանադայի բողոքական եկեղեցիներից մեկը որոշեց ճիշտ քաղաքական դիրքորոշում ունենալ. իր խորհրդի ընդհանուր ժողովում առաջարկվեց մի կողմ դնել հրեաներին քրիստոնեություն քարոզելու առաքելությունը:

Սիրելի՛ բարեկամներ, չմոռանանք, որ Նոր Կտակարանի եկեղեցին հաստատվել է ոչ թե հեթանոսների, այլ Հիսուս Քրիստոսի և նրա հրեա աշակերտների կողմից: Նրանք Ավետարանը տարածեցին ամբողջ աշխարհում, իսկ հիմա բազմաթիվ այսպես կոչված «քրիստոնյա եկեղեցիներ» անտեսում ու մերժում են բոլոր ազգերին Ավետարանը հասցնելու Մեծ Պատգամը:

Այսօրվա եկեղեցու ազդեցությունն ինչո՞ւ է այդքան փոքր: Շատ պատճառներ կան, բայց ես կնշեմ մի քանի ակնհայտ պատճառներ.

- շատ դիտորդներ, քիչ մշակներ և կատարողներ,
- մեծ հետաքրքրություն մեթոդների նկատմամբ և քիչ հետաքրքրություն պատգամի նկատմամբ,
- շատ մտահոգություն հասարակական հեղինակության համար և քիչ մտահոգություն ճշմարտության ու բարեպաշտության համար,
- քիչ մտահոգություն կամ մտահոգության բացակայություն կորսվողների և նրանց դեպի Քրիստոսը բերելու համար,
- քիչ ավետարանչական ժողովներ. ավետարանչությունն այսօր հիմնականում մոռացված է,
- նպատակից շեղվել,
- մեր առաքելությունն անտեսել:

Կարծես մոռացվել են Հիսուսի այս խոսքերը. «Դուք իմ վկաները կլինեք Երուսաղեմում, Հրեաստանում, Սամարիայում և աշխարհի բոլոր ծայրերում» (Գործք 1:8): Իսկ աշխարհն այսօր առավել, քան երբևէ Ավետարանը լսելու կարիք ունի: Եկե՛ք արձագանքենք այդ կարիքին:

Չպետք է մոռանանք, որ Ավետարանը մեզ է հասել այնպիսի մարդկանց շնորհիվ, որոնց հնարավոր չէր կանգնեցնել: Նրանք առաջ շարժվեցին աղոթելով, սիրելով և վկայելով: Առաջ շարժվելու նույն պատվերները մեզ են տրված: Նրանք փոխեցին աշխարհը, մենք էլ կարող ենք նույնն անել:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

❊ ❊ ❊

«Ուրեմն սիրի՛ր քո ՏԵՐ Աստծուն և Նրա հրահանգները, կանոնները, դատաստանները և պատվիրանները պահի՛ր միշտ»:

Բ Օրինաց 11:1

Որքանո՞վ կարող ենք սխալվել

Եղիփազը տարակուսանքի մեջ էր: Նա երկար տարիների փորձ ուներ, որպեսզի հստակ գաղափար կազմեր Աստծո՝ մարդկանց կյանքում գործելու կերպերի վերաբերյալ: Իսկապես, ամեն ինչ շատ պարզ է. եթե բարիք անես, Աստված կօրհնի քեզ՝ կյանքիդ մեջ բարիքներ տալով, իսկ եթե չարիք անես, ապա կարող ես ակնկալել ամեն տեսակի տառապանք ու դժվարություն:

Ինչպես արդեն վերը նշեցինք, Եղիփազը տարակուսված էր: Նա իր ընկերոջ՝ Հոբի մասին միշտ լավ կարծիք ուներ, սակայն Հոբի ունեցվածքի ահռելի կորստի, որդիների մահվան և սարսափելի հիվանդությամբ տառապելու լուրերը իրեն դրդեցին՝ ենթադրելու, թե Աստված Հոբին բան է ուզում հասկացնել, թե նրա կյանքում սխալ կա: Նա մտածում էր, թե Հոբի կյանքում ծածուկ մեղք կա: Աստված արդար է և երբեք նման բան թույլ չէր տա, եթե անձը իսկապես արժանի չլիներ դրան: Եղիփազը կյանքը դիտարկում էր իր սահմանափակ Աստվածաբանության տեսանկյունից: Այն իրեն ապահովության և պաշտպանված լինելու զգացում էր տալիս: Չափազանց սարսափելի է մտածել, որ ապրում ենք այնպիսի աշխարհում, որտեղ որևէ մեկի հետ որևէ բան կարող է պատահել: Պետք է, որ ինչ-որ պատճառ լիներ, որը կբացատրեր, թե ինչու այս ամենը պատահեց Հոբին և ոչ թե իրեն: Աստծո պարգևատրելու և պատժելու գաղափարը, անկասկած, շատ գրավիչ էր և նրան ապահովության զգացում էր պարգևել: Անշուշտ, Հոբը նման տառապանքի չպետք է հանդիպեր, քանի որ նրա կյանքն անարատ էր:

Եղիփազը բնավորության այնպիսի գծեր ուներ, որոնք կան նաև շատերիս մեջ: Նա գոհ էր իր աստվածաբանությամբ, որում ճշմարտության քիչ տոկոս կար. այն ավելի շուտ ուրիշներին հանդիպած տառապանքներից ինքնապաշտպանվելու գաղափարախոսություն էր:

Հոբին մտահոգում էր ոչ միայն իր տառապանքի մեծությունը, այլև այն առեղծվածը, թե ինչո՞ւ այս ամենը իրեն պատահեց, իսկ Եղի-

փազը մտահոգված էր իր սահմանափակ աստվածաբանությամբ, որը, ինչպես հայտնի եղավ, իսկական պատուհաս էր դարձել Հոբի համար՝ վերջինիս ծանրաբեռնելով մեղավորության զգացումով:

«Հոբ» գիրքը կարդալով՝ հայտնաբերում ենք, որ Հոբը, իր չպատասխանված հարցերի դեմ պայքարելով, շատ ավելի մոտ էր Աստծուն, քան Եղիփազը իր աստվածաբանության պարզունակ պատասխաններով: Որքա՞ն սխալ էր Եղիփազը: Պարզվում է՝ Հոբի տառապանքը ոչ թե իր վատը լինելու պատճառով էր, այլ ընդհակառակը՝ իր շատ լավը լինելու:

Իրականում տեղի ունեցածի խորհրդավոր ճշմարտությունը շատ ավելին էր, քան Եղիփազը կարող էր ընկալել իր նեղ աստվածաբանությամբ: Ինչպե՞ս նա կարող էր ենթադրել, թե Հոբին պատահածը Աստծո և սատանայի միջև տեղի ունեցած սոսկալի ու աներևույթ բախման արդյունք է: Ինչպե՞ս կարող էր իմանալ, որ Աստված Հոբին ընտրել էր որպես Իր հերոս: Ինչպե՞ս կարող էր իմանալ, որ Աստված Ինքնիրեն հայտնելու էր Հոբին ամպրոպի զորությամբ ու չափազանց օրհնելու էր նրան:

Պատմության ավարտին տեսնում ենք, որ Հոբը ճիշտ էր և Եղիփազի մեղադրանքն ընդունելու փոխարեն նա Աստծուն զոհ մատուցեց, որպեսզի Աստված ների Եղիփազին՝ Իր մասին այդպես խոսելու համար: Եղիփազի՝ իրականությանը չհամապատասխանող հայտարարությունները Աստծուն պատիվ չբերեցին: Հետաքրքրական է, չէ՞, թե որքա՜ն սխալ կարող ենք լինել, երբ մարդկանց ու նրանց իրավիճակների մասին ենք խորհում: Պարզապես վստահ լինելը չի նշանակում, որ ճիշտ ենք: Եղիփազի նման կարծում ենք, թե մեր իմացածը այն ամենն է, ինչ հայտնի է անձի կամ իրավիճակի մասին: Թերևս կան այնպիսի փաստեր կամ հանգամանքներ, որոնք բոլորովին ծածուկ են, և որոնց մասին երբեք չենք կարող ենթադրել: Աստծուն լավ չճանաչելը կամ ուրիշների կյանքում Նրա կատարածները չհասկանալը կարող են մեզ անտարբեր ու քննադատող դարձնել: Մեր մակերեսային բացատրությունները կարող են ավելի շուտ վնասել ու շփոթեցնել, քան օգնել կոտրվածներին ու տառապողներին:

Քրիստոսը աշխարհ չեկավ՝ դատելու կամ բացատրություններ տալու: Նա եկավ ու մասնակցեց մեր տառապանքին և որպես արդյունք՝ փրկություն ու բժշկություն բերեց: Սա է այն կոչը, որով Աստված դիմում է մեզ, որ մենք էլ նույնը անենք մեր ծանոթների համար:

Ռեքս Տիրլավ

❊ ❊ ❊

Ինչո՞ւ հռչակել Խոսքը

Աստծո Խոսքը կյանք է

Դա կենդանի Խոսք է, որ վերածնում է լսողին: Նորովի ծնունդը Խոսքից է: Կենդանի հավատքը գալիս է Խոսքը լսելուց (Բ Օր. 8:3, Հովհ. 6:63, Հռոմ. 10:17, Փիլիպ. 2:16, Հակ. 1:18-21, Ա Պետ. 1:23):

Աստծո Խոսքը զորություն է

Դա վառվող Խոսք է, որ մաշում է լսողի մեջ եղած անպիտանը: Դա և՛ հանդիմանում է, և՛ կոտրում լսողի դիմադրությունը (Երեմ. 20:9, 23:29, Հովհ. 15:3.7, Հռոմ. 1:16, 10:17, Եփես. 6:17):

Աստծո Խոսքը լույս է

Դա հավատացյալին առաջնորդող լուսարձակող Խոսք է: Առանց Խոսքի՝ հավատացյալը չգիտի՝ ինչպես ապրել: Առանց Խոսքի՝ կարող ենք լոկ խարխափել խավարում (Սաղ. 119:105, Բ Կորնթ. 3:5-6, Բ Պետ. 1:20-21, Ա Տիմ. 4:13-16):

Աստծո Խոսքը կերակուր է

Մենք պետք է ուտենք Աստծո Խոսքը, մարսենք ու յուրացնենք դա: Խոսքը պետք է մեր կյանքի անբաժան մասը դառնա: Դա պետք է կիրառվի: Սննդի բացակայությունը նշանակում է աճի բացակայություն (Երեմ. 15:16, Եզեկ. 2:8-3:3):

Ի՞նչ է անում մեզ համար Աստծո Խոսքը:

Աստծո Խոսքը քննում է մեզ

Աստծո այս կենդանի Խոսքը գործուն է Աստծո նպատակն իրականացնելիս: Դա կենդանի զորություն է, որ քննում է մեզ ամենատես աչքով՝ ներթափանցելով մեր հոգու խորքը (Եբր. 4:12, Սաղ. 147:18, Եսայի 40:8, 55:11, Գաղ. 3:8, Եփես. 5:26, Հակ. 1:18):

Աստծո Խոսքը դատում է մեզ

Աստծո Խոսքի գլխավոր նպատակը միակ Փրկչին ներկայացնելն է: Փրկչի գալու նպատակը մեղավորին դատելը չէր, այլ փրկություն բերելը: Դատաստանը փրկության մյուս մասն է, նույն կերպ, ինչպես արևի նպատակը շողալն է, բայց երբ արևը շողում է, պետք է ակնկալել ստվերներ (Հովհ. 12:48):

Աստծո Խոսքը մեզ վկայում է Տեր Հիսուսի մասին

Թեպետ Աստծո Խոսքը շատ բաների մասին է խոսում, սակայն հիմնական նպատակը մեզ Տեր Հիսուսին ցույց տալն է: Նա պետք է մնա գլխավոր Անձն Աստվածաշնչում (Հովհ. 3:11-13, 34, 5:39, 6:63, Ղուկ. 24:44, Գործք 28:23):

Աստծո Խոսքը սրբում է մեզ ու աճ տալիս

Աստծո Խոսքով մենք սրբվում ենք ու Աստծո համար ապրելու զորություն ստանում: Էտելը նախորդում է պտղաբերությանը: Լավ պտուղ կարելի է ստանալ միայն Աստծո Խոսքից (Երեմ. 15:16, Սաղ. 107:20, 119:9, Հովհ. 15:3, Եփես. 5:26, Բ Թես. 2:13, Ա Պետ. 1:23, 25, 2:2, Բ Պետ. 3:18):

Դոկտ. Չեսլո Բասսարա

«Եվ քո առջևից գնացողը նույն Ինքը՝ ՏԵՐՆ է, Նա քեզ հետ է լինելու, Նա քեզ չի թողնի և քեզ չի լքի, մի՛ վախենա, մի՛ զարհուրիր»:

Բ Օրինաց 31:8

Ապակե շիշը

Երբ կարծում ես, որ կյանքդ անտանելի է, և 24 ժամը բավարար չէ մեկ օրվա մեջ, հիշի՛ր այս պատմությունը և քաջալերվի՛ր։

Համալսարանի դասախոսը փիլիսոփայության լսարանի իր ուսանողների առջև կանգնեց։ Նա մի քանի առարկա ուներ իր սեղանի վրա։

Երբ դասաժամը սկսվեց, նա կափարիչով ապակե մեծ դատարկ շիշ վերցրեց և սկսեց այն լցնել գոլֆի գնդակներով։ Ապա հարցրեց ուսանողներին, թե արդյոք շիշը լիքն է։ Նրանք համաձայնեցին, որ այդպես է։ Ուսուցիչը խճաքարերով լի տուփ վերցրեց և այն դատարկեց շշի մեջ։ Մի քիչ ցնցեց շիշը, և քարերը տեղավորվեցին գոլֆի գնդակների միջև գտնված տարածքում։ Նորից հարցրեց, թե արդյոք շիշը լիքն է։ Ուսանողները պատասխանեցին՝ այո՛։ Հաջորդիվ դասախոսը մի տուփ ավազ վերցրեց և թափեց շշի մեջ։ Ավազը ամեն կողմ տարածվեց։ Կրկին հարցրեց, թե արդյոք շիշը լիքն է։ Հետաքրքրված ուսանողները միաբերան «այո» ասացին։ Ապա պրոֆեսորը սեղանի տակից երկու գավաթ սուրճ հանեց և այն ամբողջությամբ թափեց շշի մեջ, որը լիովին լցրեց ավազի դատարկ թողած տեղերը։ Ուսանողները սկսեցին ծիծաղել։

Երբ ծիծաղը դադարեց, դասախոսն ասաց. «Հիմա ուզում եմ՝ իմանաք, որ այս շիշը ներկայացնում է ձեր կյանքը։ Գոլֆի գնդակները խորհրդանշում են կարևոր բաները՝ ընտանիք, զավակներ, առողջություն և նախասիրած առարկաներ։ Եթե ամեն ինչ կորսվի, և միայն դրանք մնան, կյանքդ տակավին լցված կլինի։ Խճաքարերը խորհրդանշում են արժեքավոր բաները, ինչպիսին են գործդ, տունդ և ավտոմեքենադ, իսկ ավազը՝ մնացած ամեն մանր-մունր բաները։

Եթե նախ ավազը դնես շշի մեջ, տեղ չի լինի խճաքարերի կամ գնդակների համար։ Նույնն է կյանքի պարագայում։ Եթե ամբողջ ուժդ և զորությունդ վատնես մանրուքների վրա, բոլորովին տեղ չես ունենա իրապես կարևոր բաների համար։

Ուստի ուշադրությո՛ւն դարձրու այն տարրերին, որոնք ազդում են քո ուրախության վրա: Զավակներիդ հետ խաղա՛: Ժամանակի՛ն զննիր առողջությունդ: Կողակցիդ սրճարան հրավիրի՛ր. միշտ ժամանակ կլինի տունը մաքրելու և կաթող ծորակը նորոգելու համար: Նախ հո՛գ տար գոլֆի գնդակների մասին: Նախապատվությանդ շարքը ճշտի՛ր: Մնացածն ավազ է»:

Աշակերտներից մեկը ձեռքը բարձրացրեց և հարցրեց, թե սուրճը ինչի՞ խորհրդապատկերն է: Ուսուցիչը ժպտաց: «Ուրախ եմ, որ հարցրիր, - ասաց. - այն ցույց է տալիս, թե որքան էլ լիքը երևա կյանքդ, միշտ տեղ կա բարեկամի հետ մի քանի գավաթ սուրճ խմելու համար»:

«Բայց դուք նախ խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը, և այս բոլոր բաները պիտի ավելացվեն ձեզ» (Մատթ. 6:33):

Քաղված «Ավետաբեր ձիթենին» գրքից

Ամենակարող Աստված

Մի փոքրիկ եկեղեցի կար, որ կոչվում էր Ամենակարող Աստծո տաճարը: Այս եկեղեցու հովիվը մի շաբաթօրյա գիշեր՝ մինչև ուշ ժամը, գրասենյակում պատրաստում էր հաջորդ օրվա պատգամը: Գրասենյակից դուրս գալուց առաջ որոշեց զանգահարել տիկնոջը: Ժամը տասն էր, սակայն երեցկինը չպատասխանեց հեռախոսազանգին: Պատվելին երկար սպասեց և շատ զարմացավ, երբ պատասխան չլսեց: Երբ գործը ամփոփելով որոշ ժամանակ անց կրկին զանգահարեց տուն, տիկինը անմիջապես պատասխանեց զանգին: Երբ հովիվը հարցրեց, թե ինչու նախորդ հեռախոսազանգին չէր պատասխանել, կինը ասաց, որ զանգ չի հնչել: Թեև նրանք զարմացան պատահածի վրա, սակայն դա անկարևոր համարելով՝ իրենց մտքից հանեցին այդ պատահարը:

Հաջորդ երկուշաբթի պատվելին եկեղեցու գրասենյակում հեռախոսազանգ ստացավ: Մարդը, որ իր հետ խոսում էր, ուզում էր իմանալ, թե ինչո՞ւ էր իրեն հեռաձայնել շաբաթ գիշերը: Հովիվը չհասկացավ, թե նա ինչի՞ մասին էր խոսում, ապա մարդը շարունակեց. «Հեռախոսազանգը հնչեց ու հնչեց, բայց ես չպատասխանեցի»: Այն ժամանակ պատվելին հիշեց պատահարը և ներողություն խնդրեց վերջինիս անհանգստացնելու համար՝ բացատրելով, որ փորձել էր իր տիկնոջը զանգահարել, բայց հավանաբար սխալ համար էր հավաքել:

Մարդը այսպես պատասխանեց. «Խնդիր չէ, պատվելի՛: Ուզում եմ քեզ իմ պատմությունը պատմել: Շաբաթ գիշերը ես այնքան հուսահատ վիճակում էի, որ որոշել էի անձնասպան լինել, սակայն նախքան այդ աղոթեցի՝ ասելով. «Աստվա՛ծ, եթե Դու իրապես գոյություն ունես և չես ուզում, որ ես անձնասպան լինեմ, ինձ մի նշան տուր հիմա»: Ճիշտ այդ պահին հեռախոսս սկսեց զանգել: Նայեցի, որ իմանամ, թե ո՞վ է ինձ զանգահարողը, և շատ վախեցա, երբ հեռախոսի վրա տեսա «Ամենակարող Աստված» բառերը: Սարսափից չկարողացա պատասխանել զանգին»:

Այո՛, Տերը զարմանահրաշ կերպերով միջամտում է ու պատասխանում է աղոթքներին, քանի որ Աստված «չի ուզում որևէ մեկի կորուստը, այլ՝ որ ամենքը ապաշխարության գան» (Բ Պետ. 3:9): Ամեն:

Քաղված «Օրհնաբեր նոռենին » գրքից

❊ ❊ ❊

«Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր ՏԵՐ Աստվածը մեկ ՏԵՐ է. Սիրի՛ր քո ՏԵՐ Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ զորությամբդ: Եվ այս խոսքերը, որ ես այսօր քեզ պատվիրեցի, քո սրտի մեջ լինեն»:

Բ Օրինաց 6:4-5

Ես եկել եմ դժոխքից

Ես եկել եմ դժոխքից, դրախտի դուռն եմ թակում,
Հյուծված, հոգնած եմ շատ խիստ, և աչքերս են փակվում,
Կանչդ լսել եմ, Փրկի՛չ, ներկայացել Քեզ մոտ,
Ինձ չմերժես, Արարի՛չ, անուշ խոսքիդ եմ կարոտ:

Կարծում էի, թե մեղքերից կարելի էր կշտանալ,
Ուտում էի ախորժակով, չէի կարող հագենալ,
Ինչքան կերա, այնքան մեծ սով զգացի,
Գինն հասկացա մանանայիդ, գինը երկնավոր Հացի:

Սուրբ առակիդ ճամփորդի պես լույսից խավար գնացի,
Երիքովի ճամփին ծեծված, անօգնական մնացի,
Այդպես լքված, արյունլվա, վիրավոր,
Մահն էր դաժան ինձ մոտենում օրեցօր:

«Ուսուցիչները» հերթով անցնում, ամոթ էին ինձ տալիս,
Բայց ես բժիշկ էի փնտրում, հառաչում էի, լալիս,
Բոլորը խիստ, միաբերան՝ թե հերիք է մեղանչես,
Ու չեն ասում՝ ինչ զորությամբ բանսարկուից դու փախչես:

Ու անառակ որդու նման սոված, ծարավ, մերկ, տկլոր,
Ես ետ դարձա հայրական տուն լուսավոր,
Ահը սրտումս, թե Հայրը սուրբ իմ մեղքերը չի ների,
Անունս հաստատ չկա ցանկում որդիների:

Բայց դու ելար ինձ ընդառաջ, ո՛վ Հզոր,
Փաթաթվեցիր, համբուրեցիր ու նամացավ աչքս չոր,
Ասիր՝ որդուս կոշի՛կ տվեք, տաքացրե՛ք, փայփայե՛ք,
Մատին՝ մատնիք և պարարտ եզը մորթե՛ք:

Գիտեմ՝ շուտով վերջը կգա այս դարի,
Գիտեմ՝ նաև ինձ ներել ես, Միա՛կ Բարի,
Ո՛ւժ տուր, որ ես չգլորվեմ ետ դժոխք,
Ո՛ւժ տուր՝ ապրեմ առանց անեծք ու նզովք:

Հե՜յ, դժոխքի ճամփե՛ն բռնած եղբայրներ,
Թե՛ երիտասարդ, թե՛ ալևոր ծեր այրեր,
Հավատացեք՝ ողորմությունը մեծ է Փրկիչ մեր Տիրոջ,
Եկե՛ք լույսին, իսկ խավարին ասե՛ք՝ ոչ:

Եկե՛ք, քանի դուռը բաց է դրախտի,
Եկե՛ք ապրենք առանց կեղտի ու աղտի,
Հոգնածներին Տերն է կանչում հանգստյան,
Նրան վայել է փառք հավիտենից հավիտյան:

Գառնիկ Աբրեյան